ԱՅՍՕՐՎԱ ՁԳՆԱԺԱՄԸ ՀՅԴ-ՈՒՄ՝ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵՒՈՒՅԹ Է

Posted on June 15, 2018 by Keghart



Category: Opinions

Սիրանուշ Պապյան, Լրագիր.am, 5 Հունիս 2018

Մեր զրուցակիցն է քաղաքագետ, Ֆրանսիայի Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Կայծ Մինասյանը

Պարոն Մինասյան, տեսակետ կա, որ մինչև արտահերթ ընտրություններ պետք է փոխել կուսակցությունների մասին օրենքը, պետք է զտվեն 70 և ավելի գրանցված կուսակցությունները և նոր քաղաքական ուժերի ձևավորման հնարավորություն ընձեռեն: Համամի՞տ եք:

Նախ պետք էր շտկել կուսակցությունների մասին օրենքը, քանի որ կասկածներ կային իրենց ֆինանսավորման աղբյուրների, պաշտոնական կարգավիճակի վերաբերյալ: Փաշինյանն ուզում է այնպիսի նոր օրենք գրել, որով ցանկանում է ջնջել ՀՀԿ-ն ու այդպես գնալ արտահերթ ընտրությունների: Ես չգիտեմ, թե արդյոք Նիկոլ Փաշինյանն ուզում է նոր կուսակցություններ ստեղծել, բայց գիտեմ, որ ուզում է Հայաստանում ստեղծել նոր քաղաքական և կուսակցական մթնոլորտ:

Սիրանուշ Պապյան, Լրագիր.am, 5 Հունիս 2018

Մեր զրուցակիցն է քաղաքագետ, Ֆրանսիայի Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Կայծ Մինասյանը

Պարոն Մինասյան, տեսակետ կա, որ մինչև արտահերթ ընտրություններ պետք է փոխել կուսակցությունների մասին օրենքը, պետք է զտվեն 70 և ավելի գրանցված կուսակցությունները և նոր քաղաքական ուժերի ձևավորման հնարավորություն ընձեռեն: Համամի՞տ եք:

Նախ պետք էր շտկել կուսակցությունների մասին օրենքը, քանի որ կասկածներ կային իրենց ֆինանսավորման աղբյուրների, պաշտոնական կարգավիճակի վերաբերյալ: Փաշինյանն ուզում է այնպիսի նոր օրենք գրել, որով ցանկանում է ջնջել ՀՀԿ-ն ու այդպես գնալ արտահերթ ընտրությունների: Ես չգիտեմ, թե արդյոք Նիկոլ Փաշինյանն ուզում է նոր կուսակցություններ ստեղծել, բայց գիտեմ, որ ուզում է Հայաստանում ստեղծել նոր քաղաքական և կուսակցական մթնոլորտ:

Որքանո՞վ դա նրան կհաջողվի՝ հաշվի առնելով քաղաքական վերադասավորումները: Մենք տեսնում ենք, որ նախկին կուսակցություններն են ակտիվացել և պատրաստվում են արտահերթ ընտրությունների:

Ես չգիտեմ՝ ինչպես Փաշինյանը պետք է անի և արդյոք կհաջողի, թե ոչ, բայց կարծում եմ, որ այսօրվա կառավարությունն ուզում է անջատել կուսակցությունների կապը

բիզնեսից: Մենք գիտենք, որ ՀՀԿ-ն և մյուս կուսակցություններն այդ կապն ունեն: Արդյոք այսօրվա կառավարությունը կթողնի՞, որ վաղվա պատգամավորները լինեն ոչ միայն քաղաքական, այլև բիզնես անձինք: Նախքան գործարար ու օլիգարխ լինելը, նրանք քաղաքացի են և Նիկոլ Փաշինյանը փորձելու է տարանջատել քաղաքականությունը բիզնեսից, որպեսզի տնտեսական դաշտը լինի ինքնավար, իսկ քաղաքական դաշտը դուրս լինի օլիգարխների ճնշումներից:

Նախկին իշխանությունների հետ կոալիցիայի մեջ գտնված ՀՅԴ-ն միացավ Նիկոլ Փաշինյանին: Լինելով նախկին Դաշնացական՝ ինչպե՞ս եք գնահատում ՀՅԴ-ի այս քայլը և հիմա այս կուսակցությունն ի՞նչ շանսեր ունի:

Դաշնակցությունը ծնվել է 1890-ին ճգնաժամի պայմաններում, իր գոյության ժամանակ անցել է շատ ճգնաժամեր և այսօրվա ճգնաժամը, որ գոյություն ունի ՀՅԴ-ում, բացառիկ երևույթ է: Այն, ինչ տեղի ունեցավ վերջին շրջանում Հայաստանում, ամբողջությամբ խանգարեց Դաշնակցության կայունությունը: ՀՅԴ-ն հիմա ստիպված է հաշվի առնել նոր իրականությունը և շտկել իր դիրքորոշումն ու գործելակերպը: ՀՅԴ-ի գլխավոր խնդիրը հետևյալն է. այդ ուժը հիշողություն ունեցող կուսակցություն է և իրականության առջև կասկած ունի, այսինքն՝ 1991-ից ի վեր, երբ Հայաստանն անկախացավ, Դաշնակցությունն ամբողջովին լծված էր ազատագրական պայքարին, և այնքան էլ ներկա չգտնվեց անկախության տոնին: Եվ 2018-ին տեղի ունեցավ նրա և ազատ Հայաստանի հանդիպումը, որովհետև գիտենք, որ Դաշնակցությունը առաջին օրերին չէր միացել Նիկոլ Փաշինյանի շարժմանը, ավելին՝ այս շարժման առաջին օրերին դաշնակցական ղեկավարները դատապարտեցին և ծիծաղեցին ցույցերին մասնակցողների վրա: Եվ սա նշանակում է, որ Դաշնակցությունն իրականության հետ խնդիր ունի: Եվ այս տպավորությունը գալիս է դեռ 91-ից:

Դաշնակցությունը 91-ից մինչև այսօր մեկ առաջնահերթություն ունի և պաշտպանում է այդ առաջնահերթությունը՝ պետականության պրոցեսի մեջ ստեղծել նոր քաղաքական մշակույթ: Եվ այս նոր քաղաքական մշակույթի մեջ երկու մոտեցում կա. կամ իշխանության մաս կազմելով պետք է մտնես հայաստանյան իրականության մեջ, կամ ներքեւից: Եվ Դաշնակցությունը փորձում էր այս նոր քաղաքական մշակույթը ստեղծել՝ այդ հակասությանը հետևելով: Հայաստանում կան դաշնակցականներ, որ պաշտպանեցին առաջին մոտեցումը, որ պետք է մտնել իրականության մեջ՝ իշխանության մեջ մտնելով, և մասնավորապես կան դաշնակցականներ սփյուռքի մեջ, որ ասացին՝ ոչ, պետք չէ մտնել հայաստանյան իրականության մեջ վերևից (իշխանության կողմից), այլ պետք է մտնել ներքևից (ժողովրդի կողմից): Եվ դրա համար ներքին խնդիր կար Դաշնակցության մեջ: Եվ Մաքս Վեբերը այդ հակասության առջև երկու մոտեցում ունի, որից առաջինը պատասխանատվության էթիկան է, ինչը պաշտպանեց Աղվան Վարդանյանը: Երկրորդը՝ համոզման էթիկան է, Աբո Պողիկյանն էր սա պաշտպանում՝ ասելով, որ Դաշնակցությունը նախքան կենսագրություն ունենալը

արժեք է, և մենք պետք է մեր արժեքների վրա հիմնենք մեր ինքնությունը: Եվ այս դեպքում լինես հականիկոլ կամ հակասերժ, միևևնույն է, որոշումը նույնն է, քեզ հեռացնում են կուսակցությունից:

Դաշնակցությունը հիշողություն ունեցող կուսակցություն է, և դա կապված է Դաշնակցության գլխավոր հիմնադրի մահվան հետ. Քրիստափոր Միքայելյանը, որ մահացավ 1905 թվականին, ինքն էր իրականացնում քաղաքականությունը, մարտավարությունը, ռազմավարությունը և քաղաքական տեսլականը: Երբ նա մահացավ, դաշնակցական բոլոր սերունդները որբացան: Եվ այսօր ինչ գոյություն ունի Հայաստանում Դաշնակցության հետ կապված, հետևյալն է. Դաշնակցությունը չի վարում քաղաքականություն, այլ անում է գաղափարախոսություն, Դաշնակցությունը չի վարում ռազմավարություն, այլ անում է պլանավորում, Դաշնակցությունը չի վարում մարտավարություն, այլ անում է օպորտունիզմ, Դաշնակցությունը չի վարում քաղաքական տեսլականը, այլ անում է մեսիանիզմ, և որքան Դաշնակցությունը հետևի գաղափարախոսությանը, նա չի կարող շփվել իրականության հետ, և կմնա, եթե մտնի իրականության մեջ, և այդ դեպքում պետք է վարի քաղաքականություն, մարտավարություն, ռազմավարություն և քաղաքական տեսլականը: Եվ մենք կարիք ունենք Քրիստափորից եկած Դաշնակցության, ոչ Զավարյանի և ոչ էլ Ռուբեն Տեր-Մինասյանի, ուղղակի պետք է վերադառնանք Քրիստափորի ժառանգությանը և գաղափարներին, մտածելակերպին և ամբողջ իր ինքնությանը:

Այսօր մենք կարիք ունենք արդիական, բայց և հանդուրժողական Դաշնակցությանը, ոչ փակ և ավանդական կուսակցության: